ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8. 1961 Общественные науки

Ա. Գ. Հասրաթյան

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Հայ ժողովուրդը սիրով և երախտագիտությամբ է նշում իր մեծ զավակի՝ Գրիգոր Զոհրապի ծննդյան 100-ամյակը։

Զոհրապին գնահատել են արդեն մի քանի սերունդներ, ոչ միայն իբրև մեծ գրողի, իբրև հայ գրականության խոշորագույն դասականներից մեկի, այլև իբրև համոզված հայրենասերի, իբրև համարձակ և պատկառազդու հասարակական-քաղաքական գործիչի, ականավոր իրավաբան-օրենսդետի, ճանաչված հրապարակախոսի ու քննադատի։

Զոհրապը իբրև նորարար արվեստագետ, արևմտահայ գրականության մեջ դարձավ գրական նոր ժանրերի սկզբնավորող և հանդիսացավ գրական մի ամբողջ հոսանքի՝ 80—90-ական թվականների ռեալիստական շարժման ամենախոշոր ներկայացուցիչը։

Կյանքի փառավոր ուղի անցավ Զոհրապը իբրև մարդ, իբրև գործիչ և իբրև գրող։ Սուլթանական Թուրքիայի դաժան տիրապետության պայմաններում Զոհրապը երբեք չփորրացավ օրվա կացության առջև։ Ոչ մի հալածանք և բանտարկություն, որոնց քաղմիցս ենթարկվեց Զոհրապը, չկարողացան շեղել մեծ հայրենասերին իր հաստատամտորեն որդեգրած ժողովրդանվեր գործունեությունից։

Որ ելույթներից մեկում Զոհրապն ասում է, որ իր ամբողջ կյանքը կռվով է անցկացրել։ Իրոք, Զոհրապի կենսագրությունը մաքառումների փառահեղ պատմություն է։ Նրա ողջ գործունեությունը մի ըմբոստացում էր ժամանակի իրականության դեմ, «իրավունքը հզորագույնին» հակամարդկային ըմբռնման դեմ, պատերազմի և ազգերի դերեվարության քաղաքականության դեմ։

Այս դիրքերից Զոհրապը պայքարեց սուլթանական բռնապետության և ավատականության դեմ, միջազգային ռեակցիայի դեմ, հատկապես Դրեյֆուսի հայտնի դատի առթիվ, Թուրք բուրժուազիայի՝ կատաղի շովինիզմով ներծծված քաղաքականության դեմ, հայ բուրժուազիայի, մասնավորապես նրա պահպանողական մասի դեմ, մաքառեց արևմտյան իմպերիալիզմի նենգ քաղաքականության մի ձևը հանդիսացող կրոնական գործակալությունների՝ հայ ժողովրդի առավել անգիտակից մասին՝ դավանափոխությամբ և Հիպոկրիտական դպրոցով ձուլման տանող փորձերի դեմ։

Իբրև փաստաբան «Ողճմտանքի ձայներ»-ի հեղինակը ավելի քան քառորդ դար Թուրքական դատարաններում ըստ էության պայքարել է բռնապետության դեմ, փրկելով ամեն ազգի բազմաթիվ կյանքեր, պաշտպանելով սարբեր ազգի ներկայացուցիչների։ 1905 թ. մի բուլգար հեղափոխականի խոշտանգելու պատճառով՝ Թուրքական իշխանությունների դեմ իր բացած դատի համար,

Զոհրապին զրկում են փաստաբանությամբ զբաղվելու իրավունքից, և նա ստիպված հեռանում է Թուրքիայից։

Զոհրապի հասարակական-քաղաքական գործունեության ամենարուն շրջանը 1908—1915 թվականներն են, երբ նա, տարագրությունից վերադարձած, ընտրվում է Ազգային ժողովի և, հակառակ իթթիհատականների դիմադրության, Օսմանյան պառլամենտի անդամ։ Զոհրապը մեծ խանդավառությամբ՝ պառլամենտում և նրանից դուրս պայքար է ծավալում երկրի քաղաքական, տնտեսական, իրավական և մշակութային վերափոխմանը նպաստելու մտադրությամբ։

1910 թվականին ունեցած մի ատենաբանության մեջ, խոսելով բանվորական հարցի մասին, Զոհրապն ասում է. «Անտեղյակները միայն կրնան ըսել թե գործավորական (այսինքն՝ բանվորական) հարց չկա Թուրքիո մեջ։ Թեև «մեծ ճարտարարվեստը (ինդուստրիա) գոյություն չունի այս երկրին մեջ, բայց այսուհանդերձ գործավոր դասակարգ մը կա, և երկու միլիոնի մոտ կը հաշվեն զայն՝ հողային գործավորները միասին առնելով. երկու միլիոն գործավորը արհամարհելի դասակա՞րգ մրն է միթե»։ Զոհրապը պահանջում է, որ չանտեսվի «գործավորական կազմակերպություններ» ստեղծելու հարցը, չմերժվեն «ամենեն արդար պահանջները աշխատավորներուն, ժողովուրդին, որոնք վերջապես երկրին էն մեծ ուժերն են»։

Զոհրապի գեղեցիկ երազները, որ նա 1908 թ. հեղաշրջման առաջին օրերին կապում էր «սահմանադրական» կարգերի հետ, փշրվեցին, քանզի Թուրք բուրժուազիան, հանձին իթթիհատականների, շարունակում էր վարել ռեակցիոն քաղաքականություն։ Այդ պայմաններում Զոհրապի առաջադիմական գաղափարները չէին կարող կենսագործվել, քանի որ տիրապետող դարձավ ժողովրդին ստրկության մեջ պահելու բռնակալական մոլությունը։

Վերջնականապես հիասթափվելով իթթիհատականների քաղաքականությունից և զգալով հայերին սպառնացող վտանգը, Զոհրապը հույսը դնում է Ռուսաստանի վրա, հավատացած լինելով, որ, ինչպես ինքն է ասել «Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագայով պետություն, և այն ճնշումը, որի մասին այնքան շատ խոսում են, միշտ չի տիրապետի Ռուսաստանում»։

Անմոռանալի է Զոհրապի պայքարը պատերազմի քաղաքականության և իմպերիալիզմի դեմ։ Այս տեսակետից նշանակալից են նրա՝ կարապի երգը հանդիսացող ակնարկ-նամակները, գրված 1914 թ. (Թուրքիան դեռ պատերազմի մեջ չմտած), որոնց մեջ նա ասում է. «Գերման սպառազինությունը կես դար տնտեսապես ճնշելե ետքը Եվրոպան՝ զայն վերջնապես ընկճելու համար ասպարեզ եկավ այսօր, զուր ջանք սակայն, Եվրոպան և ոչ մեկ ազգի տիրապետությունը կընդունի, ազգերը գերի վարելու, աշխարհակալություն ընելու (այսինքն՝ իմպերիալիզմի) դարը իսպառ վերջացած է»։

Պայծառ եղավ Զոհրապի գործունեությունը գրականության ասպարեզում։ Նրա գրական գործունեությունը առաջին քայլերից արժանացավ բարձր գնահատության, համարվեց «հայտնություն» հայ գրականության համար։ Այդպես է ասում Հրանտ Ասատուրը 1888 թ. միաժամանակ բնութագրելով Զոհրապին իբրև «երկաթե նկարագիր» ունեցող «խիզախ ու անվեհեր» գրող։ Այս բնորոշումները միանգամայն ճիշտ են։

Գեղարվեստական գրականությանը Զոհրապը հատկացնում էր ժողովրդի կյանքը արտացոլելու և ժողովրդի կյանքին ծառայելու դեր, գտնելով, որ գրա-

կանությունը պիտի լինի իրականության «անխարդախ հայելի» և պիտի նպաստի իրականության նորոգմանն ու վերաշինմանը։

Իբրև գրականության տեսաբան, այս մարզումն էլ դրսևորելով իր արտասովոր ինքնատիպությունը, Զոհրապը գտնում էր, որ գլոնը պետք է արտացոլի կյանքի ոչ միայն մանրուքներն ու տգեղությունները, այլև վսեմությունները ու գեղեցկությունները։

Զոհրապի արտակարգ ինքնատիպությունը արտահայտվեց ոչ միայն գեղագիտական հայացքների և նոր ժանրերի սկզբնավորման մեջ, այլև գրական ոճի, գրելակերպի նորոգման հարցում։ Նա սիստեմատիկ պայքար մղեց հնավանդ, ինչպես ինքն է ասում, «անդրջրհեղեղյան» գրելակերպի դեմ և հիմք դրեց մի նոր գրելակերպի։ Իր առաջին իսկ երկերով, բացառությամբ հին գրելակերպին իր տուրքը հանդիսացող երեք քերթվածների, Զոհրապը սկսեց իր պայքարը դրականության մեջոցով, մաքառեց գաղութահայ վերնախավի կոսմոպոլիտիզմի դեմ («Չինական նամականի»), դիրքի և հարստության հասնելու համար իր ժողովրդին դավաճանելու դեմ («Անհետացած սերունդ մը»), բուրժուական ապազգայնացած երիտասարդության դեմ, որին համարեց «անօգուտ լակներ իրենց ազգին ու համայն մարդկության համար» («Վարդապետին մականունը»), վերնախավերի իրար հոշոտելու բարքերի և ֆրանսիական ոստանից ներմուծվող այլասերվածության դեմ («Կանանց բժիշկը»), ոգորեց աշխատավորության իրավունքների համար («Ներսես»), հայ ժողովրդի կենսունակությունը նվազեցնող պանդխտության դեմ և հայ գեղջկուհու մարդկային տարրական իրավունքների համար («Այրին»), արևմտյան իմպերիալիզմի՝ փոքր ժողովուրդներին իր քաղաքական կառքին լծելու համար կատարվող միջոցառումներից մեկի՝ դավանափոխության դեմ («Արմենիսա»), վաշխառության դեմ («Մեղա տեր»), բուրժուական շահագործման և բուրժուական բարքերի այլասերվածության դեմ («Փոստալ»), առօրյա կյանքում բուրժուական մտավորականության վարքագծի դեմ («Մագդաղինե») և այլ բազմաթիվ երևույթների, որոնք բնորոշ էին տվյալ հասարակության համար։

Զոհրապը ցույց տվեց բուրժուական հասարակության անընդունակությունը՝ վերացնելու կարիքի և բավարարման միջոցների հակադրությունը («Ճիտին պարտքը»), մերկացրեց դրամատերերի այն գործնականը, որի հանցագործությունների «աշտարակը», ինչպես հեղինակն է ասում, սպառնում է «մինչև երկինք հասնիլ» («Ժամին բակը»)։ Նա պատկերում է բռնապետական իրականության մեջ երջանկության հասնելու անհնարինությունը («Խնդուքը») և հասարակության անտարբերությունը անհատի տառապանքի հանդեպ («Կապիկը»)։

Մերկացնելով ժամանակի իրականության այս և այլ արատները և պայքարելով դրանց դեմ, Զոհրապը, համաձայն իր գեղագիտական հայացքների, վսեմություններ և գեղեցկություններ է հայտնաբերում ժողովրդի ընդերքում։ Այդ են ցույց տալիս «Այինկա», «Թեֆարիկ», «Զմարաղտա», «Փոստալ» և այլ նորավեպերը, որոնցով հեղինակը ցույց է տվել մարդկային նկարագրի գեղեցկությունը ժողովրդից ելած պարզ մարդկանց մեջ։

Շատ առիթներով է արտահայտել Զոհրապը իր համակրանքը հասարակ ժողովրդի նկատմամբ, սակայն, իր հարազատությունը ժողովրդին, մինչև վերջ նրա հետ լինելու ցանկությունը նա արտահայտել է իր գեղեցիկ ակնարկներից մեկում, ուր ասված է. «Տեղ մը միայն, ուր ես... պիտի ուզեի հանգչիլ, եղրայ-

բակցությունը կատարյալ է և դիրկընդխառնումը ճշմարիտ. հոն, ուր լացերը ու սուգերը շեղջակուլտերով կը լեցվին. հասարակաց փոսին մեջ»։

Խոր է Զոհրապի նվիրվածությունը իր մարդկային վսեմ պարտականություններին, պարտքի զգացումը՝ դեպի իր տառապող ժողովուրդը։ 1915 թ. ապրիլին ձերբակալում են Պոլսո հայ մտավորականությանը, որոնց մեջ էին հայտնի գրողները։ Զոհրապը խոցված այդ ոճրագործության ահավոր փաստից, բողոքում է Թալեաթին և ուրիշներին, որի համար նրան անմիջապես արսորում են՝ ճանապարհին սպանելու կարդադրությամբ։

Աքսորից առաջ, զգալով Զոհրապին սպառնացող վտանգը, բարեկամները առաջարկում են նրան հեռանալ Պոլսից, սակայն նա չի համաձայնում. «...որ՞ու թողում սա անտեր ու անգլուխ ժողովուրդը,— ասում է նա,— Չէ՛, փախչիլ չե՛մ կրնար, պետք է, պարտքս է մինչև վերջը պատնեշին վրա կենալ»։ Աքսորի ճանապարհին երախտապարտ ժողովրդի անձնվեր զավակները, հայ երկաթուղայիններ և ուրիշներ առաջարկում են փախչելու զանազան ծրագրեր։ Սպանության նախորդ օրը, բանտի ծխնելույզից մտնելով և պարզելով սպառնացող վտանգը, Զոհրապին փախցնելու վերջին փորձն են անում, սակայն նա մերժում է փախուստի ամեն առաջարկ, նկատի ունենալով, որ իր «փախուստը է՛լ ավելի պիտի կատաղեցներ կառավարության հայակեր ջոլիրը, ու պատճառ պիտի լիներ ավելի մաղձ ու թույն թափելու տարագիր հայության թշվառ և անհամար բեկորների վրա»։

Կատարվեց անխուսափելին. դահիճների ձեռքով սպանվեց մեծ գրողն ու մեծ քաղաքացին։ Չունեցավ նույնիսկ գերեզման ու հուշարձան։

Անուրանալի է Զոհրապի ստեղծագործության արժեքը իրև հոգևոր հարստություն. անուրանալի է նրա բարձրարվեստ նորավեպերի ճանաչողական նշանակությունը։ Բայց ինչ որ հավերժ կենդանի պիտի պահի նրա նովելները, պահի նրանց սանանցանելի թարմությունը—դա գեղեցկության և քերթության այն առատությունն է, որ ստիպել է մարդկանց համարելու այդ երկերը «անմրցելի հրաշակերտներ», ժամանակի գրականության «ակնախտիղ գարդերը»։ Այդպես էլ պիտի մնան նրանք. բանդի ժողովրդին ծառայող արվեստը ունի հավերժության անձնագիր։